ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

09.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 6

ԲՆԱԿԵԼԻՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով այն, որ բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունները բավարարում են <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների պահանջները, բնակելի տունը և շենք-շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերը և չեն առաջացնում սերվիտուտ, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, հիմք ընդունելով այն, որ Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի բնակիչ Քյարամ Աբասի Ավդոյանը դիմել է Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի Անդրանիկի փողոցի 2 հասցեում գտնվող իրեն պատկանող /ըստ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 08.03.1991թ. թիվ որոշման/ / 0.3065 հա օրինական և դրան կից 0.0305.9 հա հողամասի և նրա վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքներ վերականգնելու խնդրանքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի Անդրանիկ փողոցի 2 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Քյարամ Աբասի Ավդոյանը՝ /ծնված 20.07.1948թ./, գույքային իրավունքը՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0.3065հա հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ բնակելի տուն 165,5ք/մ կառուցված 1990թ, նկուղ՝ 1297ք/մ կառուցված 1990թ., պարիսպ 11ք/մ կառուցված 1990թ.:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿԱ մարզերի միավորված ստորաբաժանմանը գրանցել Քյարամ Աբասի Ավդոյանի /ծնված 20.07.1948թ./, սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4.Բնակելի տանը տրամադրել հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի Անդրանիկի փողոցի թիվ 2 բնակելի տուն:

5.25.01.2022թ. N1 որոշումը համարել ուժը կորցրած և հիմք ընդունել նոր որոշումը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի Ղեկավար՝ Ռ. Հասանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՖԵՐԻԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

25.02.2022թ.

Հասցե՝ 22 Արմավիրի մարզ, գ. Ֆերիկ, Կոմիտասի 6
Հեռ. 093147222
Էլ. Փոստ՝ ferik.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 7

ՀԱՍՑԵ ՀԱՄԱՐԱՆԻՇ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի N-2387-ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Ֆերիկ համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 22-ի Հասցե համարանիշ տրամադրելու մասին՝ թիվ 5 որոշումը, Ֆերիկ համայնքի բնակիչ Զհար Արֆուդի Աբբասյանի դիմումը

Որոշում եմ

1. Ֆերիկ համայնքում Զհար Արֆուդի Աբբասյանի տնամերձ հողամասին և բնակելի տան /ծածկագիր՝ 04-097-0010-0006/ տալ հասցե համարանիշ, փողոց Նար-Դոսի **N9**:
2. Սույն որոշումը պետական գրանցման համար ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ռ.Հասանյան